Օրինակ նամակի պես դատաւորութեան։

ԳԼՈՒԽ ԾԹ.

Տեսանելով մեր ընդունելութիւն ժողովրդեանն կիլիկիոյ հայոց 'ի վերայ արժանաւորութեան քոյ, և թուղթ փոխանորդութեան նոցայ առ քեզ Մաղաքիայ մալաշակերտու, և հաւատացաք հաւատարմութեամբ կալոյ քոյ 'ի վերայ երդման քոյ՝ տուաք քեզ նամակ շնորհաց և պաշտօնի մայր դատաւորութեան ժամանակաւ երիս ամաւ, զի նստցիս 'ի աթոռ դատաստանի հանդերձ խորհրդակցօք մէջ յապարանի դատել զմեղաւորս ըստ Օրինօքն հայաստանեայց, 'ի վերայ ամենայն ընութեան մարդոյ 'ի յերեսս երկրին հայոց, տուաք իշխանութիւն քեզ ունել ժամանակի վճռոյ կամս երկուս, և խորհրդակիցք քոյ կամս մի, և 'ի կարգադրութենէ Օրինաց մերոց փակեցաք ակն և ձեռն քոյ՝ զի մի տեսանելով զերեսս մարդոյ ողորմեսցիս և խստանացուցանես սիրտ քոյ առ գանգատող և դատախազս, և մի՛ ընդունեսցես լման մի կաշառ 'ի վերայ իրաւանց և արդարութեան եթէ ոչ 'ի զօրութենէ բանական հոգոյ ունկնդիր լինիցիս բանից գանգատողաց և դատախազից ով ոք որ իցէ, և արասցես իրաւունս և արդարութեամբ հատանեսցես վճիռ 'ի վերայ գործոց ձեռաց և բանից, ըստ իւ-